Հաշվետվություն

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ծառայությունների» ծրագրի իրականացման միջոցառումների վերաբերյալ

Հաշվետվությունը ներկայացվում է՝ ելնելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ծառայություններ» ծրագրի պահանջներից, 05.01.2026թ.-30.09.2026թ-ի ժամանակաշրջանի համար: Իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/, նրանից բխող ենթաօրենսդրական ակտերի պահանջների և իր կանոնադրության համաձայն՝ սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ենթարկում՝

1) հանրապետության սոցիալ-տնտեսական, էներգետիկայի, քաղաքաշինության, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության, ընդերքօգտագործման, արդյունաբերական ճյուղերի, առողջապահության. բնապահպանության, ռեկրեացիայի, սպասարկման, անտառտնտեսության, թափոնների գործածության, ջրային տնտեսության բնագավառներին վերաբերող հիմնադրույթային փաստաթղթերը:

2) նախատեսվող տնտեսական, սոցիալական և այլ գործունեությունների (շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, տեղափոխում, կոնսերվացում, փակում, ընդլայնում, լուծարում) փաստաթղթերը:

Կազմակերպության գործառույթի հիմնական նպատակը՝ նախատեսվող գործունեությունների և հիմնադրույթային փաստաթղթերի փորձաքննության իրականացման միջոցով կրճատել, մեղմել, կանխարգելել շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր վնասակար և բացասական ազդեցությունները:

Կազմակերպությունը հիմնադրույթային փաստաթղթերի և նախատեսվող գործունեությունների Ա, Բ կատեգորիաների փորձաքննության իրականացման արդյունքում կազմում է եզրակացության նախագիծ և ներկայացնում շրջակա միջավայրի նախարարի հաստատմանը: Հաստատված եզրակացությունը տրվում է Նախաձեռնողին:

Փորձաքննության իրականացման համար հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպություն է մուտքագրվել 145 գնահատման հաշվետվություն /ԳՀ/, որից 5-ի մասով փորձաքննության գործընթացը չի սկսվել լրակազմ չլինելու պատճառով: Միաժամանակ, Կազմակերպություն է մուտքագրվել 11 հայտ /այսուհետ՝ Հայտ/՝ համաձայն ՀՀ կառավարության **2024 թվականի հունվարի 11-ի N 43-Ն որոշման**:

- նախատեսվող գործունեությունների Ա կատեգորիայի 37 գնահատման հաշվետվություն,
- Բ կատեգորիայի 108 գնահատման հաշվետվություն,
- հիմնադրութային փաստաթղթերի 0 ՌԷԳ հաշվետվություն,
- ներկայացված 11 Հայտ,

Փորձաքննությունն իրականացվում է Օրենքով սահմանված ժամկետներում՝ նախատեսվող գործունեությունների Ա կատեգորիայի և հիմնադրույթային փաստաթղթերի փորձաքննության փուլի համար մինչև 80 աշխատանքային օր, անհրաժեշտության դեպքում

փորձաքննության ժամկետը երկարացվում է 30 աշխատանքային օր: Նախատեսվող գործունեությունների Բ կատեգորիայի համար մինչև 40 աշխատանքային օր, անհրաժեշտության դեպքում փորձաքննության ժամկետը երկարացվում է 30 աշխատանքային օր:

2026թ. օրենքով սահմանված ժամկետներում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման արդյունքում կազմակերպության կողմից նախապատրաստվել և Նախաձեռնողներին է տրվել նախատեսվող գործունեությունների, Հիմնադրույթային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվությունների 143 եզրակացություն, որից՝

- նախատեսվող գործունեությունների Ա կատեգորիայի 37, Բ կատեգորիայի 104, հիմնադրույթային՝ 2:

05.01.2026թ.-30.09.2026թ-ի ընթացքում փորձաքննության իրականացման արդյունքում ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 54 465 000 ՀՀ դրամ պետական տուրք, որից նախատեսվող գործունեությունների ՇՄԱԳ հաշվետվությունների Ա կատեգորիայի՝ 24 000 000, Բ կատեգորիայի՝ 30 300 000, ուսումնասիրության ներկայացված Հայտ՝ 165 000 ՀՀ դրամ պետական տուրք:

Փորձաքննական գործընթացի իրականացման տարբեր փուլերում կազմակերպության մասնագետները գործուղվել են ՀՀ տարածքի համապատասխան ազդակիր համայնքներ՝ հիմնադրույթային փաստաթղթերը, նախատեսվող գործունեությունների գնահատման հաշվետվությունները և եզրակացության նախագծերը հանրությանը ներկայացնելու և հանրային լսումներին մասնակցելու համար: Կազմակերպության կողմից ուսումնասիրվել և կարծիքների են ուղարկվել տարբեր գերատեսչություններ և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ: Նախաձեռնողներին են ուղարկվել լրամշակման ենթակա նախատեսվող գործունեությունների ՌԷԳ և ՇՄԱԳ փաստաթղթերի հաշվետվություններին առնչվող գրություններ: Պատասխանվել են քաղաքաշինության կոմիտեի և շրջակա միջավայրի նախարարության կողմից ստացված հանձնարարականներին՝ գյուղական համայնքների և բնակավայրերի հողերի նպատակային նշանակությունները փոխելու և այլ գործունեությունների վերաբերյալ: Ուսումնասիրվում և կարծիքներ են տրամադրվում բազմաթիվ Ջրօգտագործման թույլտվության ստացման հայտերի:

Հաշվետվությանը կից ներկայացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի 05.01.2026թ.-30.09.2026թ-ի ընթացքում կատարված միջոցառումների վերաբերյալ աղյուսակը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝
Հ. Մկրտչյան

Ա. Ալավերդյան
Է. Ամիրխանյան
հեռ. /011/22-02-18